

տային մեզ յար եւ նման պատկերներ, որոցմով ճոխ էր գործնականապէս՝ անոնց ժամանակակից Բիւզանդացւոց եւ Անտիօքացւոց կեանքն ալ¹ :

Դ. Կարծես թէ Ս. Թարգմանչաց բարոյական շունչը բարերար յեղաշրջութիւն մը յառաջ կը բերէ հայ ընթրական բարուց մէջ. եւ ըստ Փարպեցւոյն՝ մեր նախարարք սեղանի վրայ զուարճութեան մասամբ կը շատանան «հոգեւոր ճաշակօք, սաղմոսիւք եւ մարգարէական երգօք օրհնելով զպարգեւատուն Քրիստոս» (28), ինչպէս կ'ընէին Տերտուղիանոսի դարուն հաւատացեալք (Կարբ. Ա, 803) եւ Ոսկեբերանի ժամանակակից բարեպաշտ աղքատներն ալ (Թղթ. Ա, 533): Բայց մեք հայ պատմչին խօսքը շատ ամփոփ մտօք առնելու ենք. այս ինքն երկիւղած իշխանաց ոմանց մասին միայն: Իսկ այլոց նրկատմամբ՝ ինչպէս ընելու էին, կամ իբրեւ յորդոր մը նոյնպէս ընելու: Վասն զի մի եւ նոյն ժամանակ Վասակայ խնճոյքը կը հնչեն տակաւին «յերգս արբեցութեան եւ ի կաքաւս լկտութեան, քաղցրացուցանէր ոմանց զկարգս երաժշտական եւ զերգս հեթանոսականս» (Եղիշ. 52): Եւ եթէ ու-

1. Ոսկ. Թղթ. Ա, 468, 533-4, 849-53. Մտթ. Ա, 692-5.